


ՏԻՐ ԵՒ ՏՆՈՒՆ
 Ե. ՓՈՐՈՍՅԱՆ
 Նամակ կամ որ եւ է
 գրութիւն պէտք է ուղղի առ
 Տնօրին ԱՐՇԱՒԱՅՍ ԳՐԱԳՐԻ
 ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)



ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԿԵՊՏՈՍԻ ԶԱՄԱՐ
 Տարեկան ողջ դասիկն. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԻ
 Տարեկան ծրանկ 20
 Վեցամսեայ » 12

E. TOROSSIAN
 Propriétaire du journal arménien
 ANKHALOUCHE
 LE CAIRE (EGYPTE)

Լ Ր Ա Պ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻԿ
 Եւ թղթատարի ծախքը
 Խնայարութեան վրայ է :
 Խնայարութեան ուղղուած
 գրութիւնք ևս չ'են տրուիր
 *
 ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ
 Կանխիկ վճարելի են

ԸՆԶԱՔԱՂՑՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱՄՈՒՐԻ ԵՐԿՐՈՐԻՆԵՐԸ

Լուրջ ակնարկ մը միայն կը բաւէ հաստատելու համար թէ՛ ընչաքաղցութիւնը մեզ հետ ո՞ր աստիճան ընտելացած է : Ամեն անտէր որոնք փրկեց յանձնական դճուճ հաշիւները չեն կրցած հաշտեցնել ընդհանուր շահերուն հետ : Ուրիշ միջոց չեն ունեցած երբէք : Բայց միայն ընչաքաղցութեան յոռի ու պիղծ ասպարէզին մէջ հսկայաքայլ արշաւել : Կարծես դա պարզապէս խթան մը նկատուած է մարդկային յառաջիմութեան և միևնոյն ատեն ազտոտ մոլութիւնները շոյելու միակ սկզբունք մը : Ազնուպետական դասակարգէն սկսելով մինչև գոհարի կամ հասարակ տարրին մտքին ու սրտին խորը եթէ թափանցենք, պիտի տեսնենք այդ անշէջ կրակը և կարելի չէ նոյն իսկ ո՛ւրէ ազդու միջոցով մեղմացնել զայն :

Մարդ՝ ամեն ստրուկ և անպատուաբեր միջոցներու դիմելու հարկադրուած է որպէսզի կարողանայ ընչաքաղցութեան քաղցրահամ պտուղը ճաշակել . ցաւալի է եղած նամանականդ տեսնել թէ՛ այս դասակարգին շրջանակը հետզհետէ ընդլայնած է, և ամեն միջոց ապարդիւն եղած է, զանոնք զարգացման ու յառաջիմութեան մակարդակին բարձրացնելու : Անձնասիրութիւններ վիրաւորած չենք ըլլար ի հարկէ երբ յաւելուինք թէ այդ դասակարգին պատկանող անհասանքը բարոյապէս շատ ստոր մնացած են :

Իրամը, ա՛հ այն դրամը, որուն հրաշագործութիւնը և քաջագործութիւնները մարդկութեան հեշտանքն ու հաճոյքը կը փայլայայեն, որուն գերմարդկային զօրութիւնը ամեն մտքեր ու սրտեր շլացնելու հանմանքն ունեցած է, և վերջապէս անոր մագնիսականութիւնը անբերակալայելի և անբացատրելի ուժգնութեամբ մը իրեն կը քաշէ առ հասարակ ամեն մահկանացուները, պարզապէս դատապարտած է մարդկային ազգը կատարեալ յուստեսութեան մատնուելու, միշտ իր ընծայած մասնակի իրական օգուտներն մատնանիչ ընելով :

Այո՛, դրամը, արեգակին զաւակը և լուսնոյ եղբայրը եղած է՝ որ կը լուսաւորէ ամեն մուշկամած ու տոգոյն դէմքեր . ակնարկով հրապոյրներ կը ներշնչէ ամեն դասակարգի սրտերու, և պայծառ

ու փառապանծ լոյսերու ու շողերու մէջ կը փայլեցնէ զմարդ . . . :

Ուրեմն աչքի առաջ ունենալով դրամին կատարած դերը և անոր ընձեռնած օգուտները, մենք ալ ուրիշ բան չենք ունեցած ընելիք, բայց եթէ անվերջ վազըով մը հալածեմք զայն . միջոցներ կը խորհինք անոր քաղցողական զօրութիւնը խլելու, թէպէտև այդ միջոցները ըլլան պատուաբեր և կամ՝ կարի անպատուաբեր . մեր փոյլը չէ . բաւական է որ վաղ կամ անագան հասնինք մեր նպատակին . ահա ճիշդ այդ վայրկեանին է որ կ'զգանք թէ ընչաքաղցութեան մահաբեր ախտէն արդէն վարակուած ենք :

Թէ ընչաքաղցութեան ողին մարդկային կեանքի ո՞ր շրջանին մէջ ծագում կ'առնէ : Հարցում մը ահա, որուն բացորոշ նշատախան մը տալու համար չենք կարծեր թէ խել մը դժուարութեանց բաղնիք :

Շարք մը օրինակներով կրնանք ապացուցանել թէ՛ մարդկային կեանքի առաջին շրջանին մէջ նոյն իսկ ընչաքաղցութեան փողփողումները կը տեսնուին :

(Շարունակելի) Գ. Ե.

ՆԱՄԱԿ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒԹԻՆ

ՄԵՆ ԵՐԿՐՈՐԻՆԵՐԸ

Աղէքսանդրիոյ Աղք. Բարեգործ. Ընկերութեան մեծ Երեկոյթին առթիւ հետեւալ նամակն ստացած ենք :

Աղէքսանդրիոյ Աղք. Բարեգործ. ընկերութիւնը իր տարեկան մեծ երեկոյթը պիտի տայ յառաջիկայ Մարտ 11 ի երեկոյթի իրերին, Ձիգիւնայի թատրոնին մէջ :

Ներկայացուելիք խաղն է Վահիճեան օրէբայ մը, 1025 Նիկիոյն, Ֆրանսական Օրէբայի խումբին կողմէ :

Այս երեկոյթը, որուն իր հովանաւորութիւնը տուած է Վսեմ. Պողոտ փաշա Նուպար Եւ որուն գլուխ կեցած են Վսեմ. Կարապետ պէյ Բէիզեան Եւ անխոնջ Պ. Չարեհ Սըվազը, Եւ զանակին ամենէն մեծ յաջողութիւնը կոչուած է ըլլալ : Առ նուազն երեք հարիւր անգլ. ոսկի գուտ հասոյթ այժմէն իսկ ապահովուած է :

Բոլոր օթեակները եւ թիկնաթոռները դեռ տեղուած են արդէն, այնպէս որ թիկնաթոռներու սովորական 250 թիւը անբաւական դարձելով, Կարգաբիւր Մասնախումբը հարկադրուեցաւ 18 թիկնաթոռ եւս աւելցնել, գոհացում ապու համար եղած բազմաթիւ խնդրանքներուն :

Վսեմ. Կառավարիչը, ռուսական եւ Ֆրանսական հիւպատոսները եւ Եւրոպական ամբողջ բարձր դասը ներկայ պիտի գտնուին սոյն երեկոյթին :

Եթէ տիրութեան պատճառ մը ունենք անշալ քանի մը հայ աղաներու բացակայութիւնն է այս երեկոյթէն, որոնք Աղք. ընկերութեան վարիչներուն դէմ հակառակութիւն ունեցած ըլլալուն համար ազատաց անունով իրենցմէ խնդրուած նպատար մերժեցին : Այս աղաներուն ճարտան արդէն անցեալին մէջ ալ անուած ըլլալով իրենց ընթացքին համար չ'է որ կը տըլուինք, այլ պարզապէս անոր համար որ իրենց մերժումը « դժբաղդաբար » ո՛ր եւ է ամենազոյզն վնաս իսկ չի կրցաւ պատճառել ազատներուն, զի ինչ որ իրենց կողմէ մերժուեցաւ՝ քառապատիկ խնդրանքով մէկ օրուան մէջ սպառեցաւ Եւրոպացիներէն : Ո՛վ կրնար ենթադրել թէ այս աղաները այդքան ալ արհամարհելի քանակ մը կը ներկայացնեն եղբր . . . :

Աղաները տոմսակ մերժելով երեք տեսակ վնասի ենթարկուեցան — Ա. — Մերժումին ապարդիւն մնալով, չի կրցին իրենց կիրքերուն յարուրդ տալ :

Բ. — Ներկայացուցին գիշերը, իբրև Հայ գաղութին աղաները, Եւրոպացիներուն մէջ փրքանալու հաճոյքէն զրկուեցան :

Գ. — Տիրուր ապացոյցը առկա այն ոչնչութեան զոր իրենց խմբակը, մեծով պղտկով, կը ներկայացնէ տեղական հանրային գործերու մէջ :

ՆԱՄԱԿ ԳԱԶԻՐԷՆ

ԵՐԿՐՈՒ ԽՕՄՔ ՇԷՅԻՍ ԷԹՄԱՆԻ ԱՊԱՏԻԵԼԻ

ՄԱՍԻՆ

Առաջնորդարանը փոխանակ այլ ընդ այլոյ տարածայնութիւններով Շէյիս Էթմանի ապատիէի մասին իւր ունեցած մեծ սխալը փակելու, աւելի լաւ կ'ընէր տեղական դատարանի կողմանէ տրուած վճիռը հրատարակութեան տալ եթէ ըրածնին կամ ընկելքին ժողովուրդին աչքին փոշի փչել չ'էր . փաստաբանին անհոգութեանն ալ թող չ'տանձ ինչպէս որ կը խօսուի . ահա՛ ճիշտ նկարագրութիւնը . օրինաւոր գօնորար մը ըրած են . ըսելիք մէջ թէ՛ Ապատիէի մէջ գտնուած շարժական իրաց մէկ ցուցակ մըն ալ կայ որ երկու կողմանէ ստորագրուած է . եթէ այդ ցուցակը գտնուէր՝ բնականաբար խնդրոյ անարկայ ըլլալիք բան մը չ'էր մնար, ուրեմն նմանիւն եւ ներկայ վարձկաններուն վրայ ի՞նչպէ՞ս պիտի հաստատան որ պակասած իրերուն փոխարէնը վճարել տալու իրաւունք ունենան . բարեխղճութիւն վարձկալաց եւ դժբաղդութիւն ազգային առաջնորդարանի, յիշեալ շարժական իրերու ցուցակը հաւաքուանալով կարծեմ փաստաբան էֆէնտիին թեւ ու թիկնաքը ջախջախուած է : 1000 ոսկիի չափ գումար մը տուեալը պիտի վճարէ անշուշտ . ընդունինք թէ վերաքննութեան դատարանը փոքր գումար մը գեղջէ . բայց այդ գումարը չ'է միայն ազգին վնասը . 1000 արմուկնի պակաս է . եթէ ամեն մէկ արմուկնի երկու ոսկի գին ունի՛ առ նուազն ըսել է 2000 ոսկի վնաս մը կայ արմուկնիներէն . աօոր վրայ աւելցուր

ապրիլի 1000 արմառենիին տալիք եկամուտը որը կը կորուսի ամեն արևոյ համար

Հրաշքի գարը անցած է կ'ըսուի . ուրեմն շարժական իրերու ցուցակին հասկանալուն ինչ անուն տանք : Ատենապետ փաշան , արդ- հօք պիտի հաւատա՞յ եղած այս հրաշալիքին ալ որ կարծենք առաջինը չէ :

Կ . ՄԻՀԱՆՕՅ

ՆԱՍԱԿ ՓԱՐԻՉԷՆ

Օկրսթ - Բէնարի ստորագրութեամբ՝ 1900 Դեկտ . 20 « Լ'Ինիստն Նասիծնալ » Գաղ . գաւառութիւնի մէջէն կը քաղենք հետեւեալն , որ թէև նորութիւն մը չէ , սակայն շահեկանութենէ ևս զուրկ չկրնար համարուիլ :

ՀԱՅԵՐ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԳ-ՔՈՒՐԲԵՐ

Խաղաղութեան Համաժողովը որ գումար- ունեցաւ Յուդայական լրանալու ժամանակ- ները , զբաղեցաւ նաեւ Հայկական խնդրով , և Հայաստանի մէջ ըլլալիք բարենորոգմանց համար որոշում մը քուէարկեց . վասնզի , ինչ որ ալ ըսեն թրքասերներն , Հայկական խնդրը ներքին քաղաքականութեան խնդիր մը չէ՝ միմիայն Օսմանեան կառավարութենէ կախաւ- ալ՝ համազգային յայտնի խնդիր մը որ դեւա- նագիտութիւն կը վերցնէ :

« Այն , շատ ատենէ ի վեր համազգային ի- րաւանց կարգն անցած է . ան ներկայացուած է Պէտլինի վեհաժողովին Եւրոպական գիւտա- գիտութեան կողմանէ , որ հանդիսաւոր դաշ- նադրութեան զօրութեամբ , իրաւունք ևս պար- տականութիւն ունի միջամտելու ի նպաստ Հայ ժողովրդեան : »

Ամենքը գիտեն , որ Սուլթանի շրջապա- տողները հակառակ են ամեն ատակ բարենո- րոգմանց , և կը փոխանակեն կոտորածներով , իմբովին բանտարկութիւններով , հրկիզու- թեամբ ևս աւերամբ :

Երիտասարդ-Թուրքերու խումբը , այսին- քըն ազատամիտ կոչուած Թուրքերը , որ Օս- մանեան կայսրութեան համար , Եւրոպական Սահմանադրական տէրութեանց նման Սահ- մանադրութիւն մը կուզեն , Հին-Թուրքերէն աւելի համակրալից չեն մեզ համար : Իրենց պարագլուխը , Ահմէտ-Րիզա պէյ , կ'ընդդիմա- նայ Հայերուն ազատ տէրութիւն մը կազմելուն , և խաղաղութեան Համաժողովին մէջ , շատ անյող կերպով , հակառակեցաւ հայրենասէր Պ . Առաքելեանի կողմէ ներկայացուած յիշա- տակագրին :

— (Թ Ե Ր Թ Օ Ն) —

ՈՐԿԻՄԱՄՈՒ ՏԵՐ ՊԱՊԱՆԵՐԸ (ՓՈՆՍԻՐՈՒԹԻՒՆ)

Ժամանակաւ քահանաները շատ կուտեն և ղեր , և այնչափ շատ , որ եթէ մէկը՝ փորին ամեն կողմը ցորենաբարձ նաւերուն պէս լեցու- նելով կշտանալու ըլլայ , — Այսօր քահանայի մը չափ կերայ — կ'ըսէ կղեր :

Թէև պատմութիւնը հին է և կը վերաբե- րի անցեալ դարու քահանաներուն , սակայն մեր նպատակն է ծանօթացնել ընթերցողները , այդ հին սերունդին հետ , որոյ ժառանգներէն թե- րեւ ներկայ դարուն մէջ ալ գտնուին , և մի- անդամայն ընթերցողները հաճելի ժամանց մը կուենանան կոկորդալիքի ծիծաղելով :

Քահանաներէն մէկը Չապկի նոր կիւրակե- ին իւր ծուխերէն մէկուն տունը , ըստ սովո- րութեան անօրհնէքի կ'երթայ և կերակուր կուզէ :

— Աղջիկս , հայտէ՛ նայինք , կերակուրը բե՛ր . քանի չը պատառ բան ուտեմ երթամ , զէքէ գործ ունիմք . . .

Աղջիկը կերակուրը կը պատրաստէ , քա-

Հայաստան , թէև Թուրքիոյ , Ռուսիոյ և Պարսկաստանի մէջ բաժնուած , իր ազատու- թիւնը ձեռք ձգելու յոյսէն երբէք չէ հրաժարած սակայն , հակառակ իր աշխարհագրական դիր- քին կազմակերպութեան : Հայաստանի շնորհ- ուելիք բարենորոգումներն անկախութեան պատ- րաստութիւն մը պիտի ըլլան . վասնզի հող է նպատակակէտն որ Հայկական պահանջներն կ'արդարացնէ ևս այս պահանջումներն Երի- տասարդ-Թուրքերու պահանջած բարենորոգ- մանց հետ երբէք առնչութիւն չունին . ևս պէտք է խիստ զգուշանալ Հայոց հետ չփոթելէ , իրենց ձգտումներն , ինչպէս միոյն նոյնպէս միւսներ- րուն , իրարմէ բոլորովին տարբեր են :

Պ . Բասմաշեան , « Բանասէր » հօդուածի Տնօրէնն , « Լ'Արմէնի » մէջ հետեւեալ յօդուա- ծը կը գրէ , որով կը տեսնուի որ Ահմէտ-Րիզա- թի ջատագովութիւններն ևս վկայութիւններն հաստատութիւն չեն գտներ :

« Ահմէտ-Րիզա , ի նպաստ Հայաստանի ներկայացուած Յիշատակագրին ընդդիմախօսել կարծեց , առարկելով , ի մէջ այլոց , թէ Հա- յեր Տաճկահայաստանի մէջ փոքրամասնութիւն կը կազմէին , և թէ հայաբնակ նահանգներուն մէջ մեծամասնութիւն կազմողներն էին Թուր- քերն և Քուրտերն : »

« 1877ի Ռուս-Թրքական պատերազմէն յե- սոյ , Օսմանեան կառավարութիւնը Ասիական նահանգներն այնպէս մը բաժնեց որ մասնետա- կան ցեղերն բնակչաց մեծամասնութիւնը կազ- մեն : »

« Եւ այս արդիւնքը ձեռք բերելու համար զբաղի նահանգներու սահմաններն կերպարա- նափոխեց , արդարեւ անա ինչո՞ւ համար Եւրո- պական տէրութիւններն 1895 Մայիս 11ին Սուլ- թանին ներկայացուցած իրենց Յիշատակագրին մէջ պնդեցին որ Հայաստանի նահանգներուն բաժանումը ազգագրական տեսակէտով ըլլայ և նախկին բաժանումն պահպանուի : »

Խնդիրն այս վիճակին թողով , յառա- ջիկային մասնաւոր յօդուածով Երիտասարդ- Թուրքերով պիտի զբաղինք . բայց Հայաստանի բարեկամներն առաջուց թող գիտնան ևս վստահ ըլլան որ մահիկին երկրպագուաց Կորտուշներն մեզի ամենափոքրիկ շփոթութիւն մ'անգամ չեն պատճառիր :

Փարիզ 26 Փետր . 1901 ՅԻՍԷ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

ՀԱՅԵԼԻԻ ՄԸ ԵՏԵԻ ԹԱՔՈՒԱԾ ՀԱՐՍՏՈՒ ԹԻՒՆ , ՄԸ Քանի մը օր կայ Պ . Մօժէ Փարիզի

հանան ալ կը պատրաստուի . . . տան տէրը սեղա- նը կը դնէ ևս առաջին անգամ երեք կտոր խոլ- պասրը կը բերէ . Տէր Պապան է քիւլպասթիին վրայ կը յարձակի քաջութեամբ ևս յաղթանակը կը ասնի . . . իր փորը :

— Ես շատ չպիտի ուտեմ , աղջիկս , սանկ քիչ մը յիօրթեմիչ ըլլամ տէ կրթամ :

— Մայրսնու սօրխախէն հրամայեք , Տէր Պապա՛ :

— Հող մ'ընէք , Առտուած տուններնիք շէն պահէ , հոս իմ տունիս պէս եմ , աղջիկս , քիչ մը հաց տանա բեր յ սա գինին ալ լեցուր . . .

Ըսելու չմնար , մայրսնու սօրխախէն ալ քիւլ- պասթիին այցելութեան կ'երթայ . . .

— Աղջիկս , քիչ մը հաց տանա բեր . կուզես նէ սա գինին ալ լեցուր , հայտէ աղ- ջիկս :

— Քեպպպէն հրամայեք , Տէր Հայր , կ'ա- զայնմ յեփթեմիչ մ'ըլլաք :

— Տէր ողորմա՛ , առ ինչ խօսք է . . . աղջիկս աղքատն քիչ ևս չիներ . մեղաւորս սալաթան շատ կը սիրեմ . մեծկակ քապախ մը սալաթա բերէիր . . .

— Աղջիկս , վեր գալն իքէն , քիչ մը հաց ալ բերէիր . . .

— Հրամայեք , Տէր Պապա , նիյիթ քապախ- էն ալ առէք :

— Շնորհակալ եմ , աղջիկս , սա գինին ալ լեցունէիր պարէ , քիչ մ'ալ հաց բերէիր .

գնահատիչ մը՝ պաշտօն ստանձնած էր Լա- վրէթ փողոցը բնակող 82 տարեկան հա- սառու կնոյ մը կարասիները ծախելու , որ մեռած էր առանց ժառանգորդ և առանց թուղթի կտոր մը ձգելու , որով կարելի չեղաւ իր ո՞վ ըլլալը հաստատել :

Կարասիները կառավարութեան ի նը- պաստ պիտի ծոխուէին : Օթէլ տէ Վանթի բեռնակիր մը , Պ . Կրանտ , եկաւ կառքով կարասիները փոխադրելու . փոքրիկ հայե- լի մը պատէն վար առած ժամանակ զար- մացաւ , տեսնելով որ հայելին խիստ ծանր էր , ետին դարձուց և տեսաւ որ հաստ թուղթով ծրար մը հայելին սախտակին գամուած էր . բեռնակիրը զայն բացաւ և յ'ապուշ կրթեցաւ՝ դէպ մը պանքտոմաներ և ոսկիներ գտնելով , որ 41900 Ֆրանքի մօտ բան մըն էր :

Բեռնակիրը խորհելով որ մենամուկ պառաւը կրնար ուրիշ թաքստոցներ ալ ունենալ , պատերը շամիրեց և իրաւ ալ կարասիի մը ետեւ որմածակի մը մէջ արկ- վիկ մ'ալ գտաւ , որուն մէջ 10000 Ֆրանք և ադամանդազարդ գոհարներ կային :

Պ . Կրանտ փութացած է իր պետին յանձնելու բոլոր այդ գտած գաները և շատ շնորհաւորուած է իր պարկեշտութեան և առաքելութեան համար :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԷԼՎԱՆԻ ԱՐԿԱԾԸ

Հէլվանի երկաթուղոյ ընկերութիւնը խաղաղօրէն և ամենազովելի փութկոտու- թեամբ կարգադրած է վերաւորեալներու և մեծաղջներու ընտանեանց հատուցուելիք տուգանքը :

Ընկերութիւնը նախաձեռնարկ եղած է և ուղղակի անոնց դիմած է քանակը որո- շելու համար . այսպէս կ'իմանանք որ ե- դիպտական բանակէն վրնուրի մը համար ընկերութիւնը ուղղակի անոր գնդապետին դիմած է և առանց դիմադրելու և կամ բողոքելու ընդունած է սպային որոշած 4 տարուան թոշակին գումարը վճարել :

Ձեր բարեպաշտութիւնն այս առտու եկեղեցի գնաց — աղջիկս , կերակուր բերէիր քիչ մը :

— Հրամայեք , Տէր Պապա՛ , չ'ընտրուիմ :

— Մաքարօսնիս կ'ախորժիմ , բե՛ր . կար- ծես քի ուտելն ալ դիրքին է սէ , մարդուս շատ ուտելը կուգայ . . .

— Մաքարօսնիս քիչ եկաւ կարծեմ . . .

— Աս խօսքը մ'ընէք կը սրբողիմ :

— Եղի մէջ հաւկիթէն չէք ախորժիմ :

— Կ'ախորժիմ ևս կուտեմ . . .

— Սոնտիսէն ալ կերէք :

— Կուտեմ կոր . . .

— Պանիր ալ առէք :

— Կուտեմ կոր ես՛ , ամենէն ալ կերայ իչ- թէ . աղջիկս , դուզիս քիչ մ'ալ փաստուս բե- րէիր , հայտէ աղջիկս , քիչ մ'ալ պոճուիս , վեց եօթը ինչիս ալ հաց բե՛ր , չիւնքի մեղա- ւորս յերեզր փէք կը սիրեմ :

— Աս ինչ խօսք է , թող բերուի , Տէր Պապա՛ :

— Ողջ եղիք , Առտուած անփորձ պահեսցէ , միում հազարապատիկ , բերապատիկ պարգե- ւեսցէ — սա գինին ալ լեցունէիք — յամենայն չարեաց ազատ պահեսցէ — փասթրման ալ ինչ աղուոր է կեանս երկարս պարգեւեսցէ — սու- ճուին ալ պահարյի է կարծեմ — երեւելի ևս ա- ներեւոյթ թշնամեսց — ինչ անուշ գինի է — ազատ պահեսցէ — Ծօրկիին գինին ըլլալու է —

Ն. Բ. ԽՏԻՎԸ 20 անգրիական ոսկի շնորհած է Մեյքիթերու Բարեգործական Ընկերութեան :

ՍՈՒՏԱՆԻ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ . — Գահիրէի ատեանը իր քննութիւնը փակած է Սուտանի սուլտանու գանձերու խնդրոց մասին և եզրակացուցած է որ բոլոր ամբաստանուածները՝ որոնք իբր յանցաւոր կը նկատէ և կամ խարդախանքի մեղսակից, ոճրագատ ատենին առջև հանուին ըստ պատժական օրինագրքի 189, 190 և 192 յօդուածներուն :

ԱՊՏԻՆԻ դատարանը արտօնած է երաշխաւորութեամբ ազատ արձակել այս խնդրով ամբաստանուած անձանց մէկ քանին երբն :

Նասրալլահ պէյ Արիֆ 2000 ոսկի երաշխաւորութիւն տուած է, Սապա Խուզամ և Եուսէֆ էֆ. Կէպրայէլ 300 ական ոսկի, Ֆրանսէզ էֆ. Խուզամ և Տօքթ. Իպրահիմ Խուզամ 250 ական, իսկ միւս խնդրագիրները մերժուած են :

Ն. Վ. ԵԱԳՈՒՊ Փաշա Արթին, Արաբերէն լեզուի քննիչ շէյխ Շէրիֆի ընկերակցութեամբ Ֆէյում հասած է և նախ կառավարական դպրոցը և ապա Խպտինբուրունը քննած է :

Ն. Վ. Ը շնորհաւորած է դպրոցներուն տնօրէնները և բոլոր ուսուցիչները, աշակերտներուն ըրած յառաջդիմութեանը համար :

ՆՈՐԱԿԱԶՄ ՀՐԱՏԱՐԱԿԱԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ «ՆՈՐ-ՕՐ»

Արգէն մեր Ազգայինները գիտեն թէ տարւոյս սկիզբէն սկսեալ — 1901 Յունուար 1 — Կազմուած է Հրատարակչական Ընկերութիւնը, և միևնոյն ատեն ձեռնարկած իր անդրանիկ հրատարակութեան, որ է՝ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ :

Ասկէ երկու չաբաթ առաջ ալ «Արշալոյս» ընթերցողաց և բոլոր ազգայնոց հրապարակաւ ծանուցուեցաւ թէ նորակազմ Հրատարակչական Ընկերութեան հրատարա-

- հայտէ ազդիկս, ինծի վեց եօթը հաս հաւկիթ եփէիք աէ երթամ զերե ուշ մնացի, — Եւս ըրէ՛ք : — Մինչև որ եփի նէ պարապ չը նստիմ. «ըկէ քիչ մը սուճուիս բերէիք, աղա՛ս, խելօքիկ տղա՛ս... — Հրամեցէ՛ք, Տէր Հա՛յր : — Հրամեցէ՛ք, Տէր Պապա՛, հաւկիթներն եփեցի : — Ողջ ըլլա՛ք : Երկու ժամուան մէջ նաւը բոլոր բեռը կ'առնէ... — Շնորհակալ եմ աղուոր մը չեօքիկն՝իջ եղայ, հիմա Մարգար աղային տունը պիտի երթամ, քանի մը պատառ ալ հոն կուտեմ. է՛յ, Տէր ընդ Ձեզ. Ապտուած շատ տարիներու հասցունէ : — Ուրիշ օր մը նորէն հրամեցէ՛ք. Տէր Պապա՛ : — Եստ աղէկ... Աղէքսանդրիա ՀԱՍԿԱՔԱՂ 1 Մարտ 1901

կած ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ տետրին Ա. պըրակը հրապարակ ելած է և կը վաճառուի :

2-րդ տպուած ինչ դիտումով և նպատակաւ «Նոր-Օր» թերթը և իր շուրջ հաւաքուողները, զայն իբր թերթօն հրատարակել սկսած են : Արդեօք կուզեն այդպէսով նորակազմ Ընկերութիւնս իր խանձարուրին մէջ խեղդե՞լ : շիտակը գովելի ձեռնարկ մ'է դա և այս քանի մը տողերով կ'արժէ որ արձանագրենք այդպիսի անազնուութիւն մը, ապագային այդ մասին պէտք եղածները խօսելու համար :

Այսօր պատիւ ունինք Պատ. ազգայնոց ծանուցանելու թէ «Սահմանագրութեան» տետրին Բ. պրակն ալ հրապարակ ելած է և կը վաճառուի :

1. Տ. Կարապետ Երզնկացեանի խանութը, ի Շարա Ապտիւլ Ազիզ.
2. Սըլանտիտ Պաուի դիմաց, Տիար Գառնիկ Սիրունեանի սեփականութեան մէջ ի Կոան Գաֆէ Շիշէ :
3. Ի Գլէթ պէյ, Տ. Մարտիրոս Գասպեանի քով : Հիմնադիր Վարչութեան Ատենադպիր Ատենապետ ԼԵՒՈՆ ԱՐՄԵՆԱԿ ՓԱՓԱԶԵԱՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Պէտքօնթիւն 3 Մարտ . — Տի. քսպուրկէն եկող կարևոր պահակախումբ մը Պօէր գօմանտօի մը հանդիպած է և անոնցմէ պաճարներ գրաւած է. Անգղիացւոց կորուստը 8 վիրաւորեալներէ կը բաղկանայ : Սէլանիկ 4 Մարտ . — Բջօֆի վրայ գտնուած թուղթերուն մէջէն Պօլիս բնակող ուսուցչի մը նամակը գտան, որ յանձն կ'առնէր Սուլթանը սպաննելու փորձը. ուսուցիչը անմիջապէս ձերբակալուած է :

Իէյթթաուն 4 Մարտ . — Ժանտախտը կը տարածուի, երէկ 5 բնիկներու դիակները գտան և այսօր 11 նոր դէպքեր կը ծանուցանեն, ընդ որս եւրոպացի կին մը :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ . — Չայն Հայրենեան կը գրէ թէ՛ Անգլիացի օրիորդ մը, Մանչէսթրի հոգևոր հովիւ Տէր Թորոս քահանայ Զուղայեցիի ձեռքով 30 ոսկի զրկած է Պատրիարքարան, ի նպատակ Արաբիկի Որբանոցին :

ՍԱՐՈՒԹ ԶՕՐԱՎԱՐԸ . — Անցեալ շաբաթները Էրմէլօի մօտ եղած գործողութեանց միջոցին սպաննուող Սըրուիթ զօրավարը Պօէր բանակի քաջերէն մին էր :

Գրօնթի անձնատրուութեան առաջի օրը գերի բռնուեցաւ Բուտուզպէրկի հունին մէջ, բայց գերիներուն հետ զինքը հարաւ փոխադրող կառախումբէն փախչիլ յաջողելով, Տը Աարի մօտ Գօլէսպէրկի Պօէր գծերը մտաւ :

Այս անգամ ինչպէս կ'իմանանք իր մահը գտած է :

ԳՕՆԿՕ . — Գօնիօէն եկող Ալպէր վիլ նաւը հետեւեալ լուրերը բերեր է . «Քասսաիի ապստամբութիւնները զրսպուեր են. լուր չկայ Վուլֆի արշաւանքէն, որ նոյ. 13ին մեկնած էր Լուլուաի բնիկներէն շարքուած Պ. Լէմէնտի վրէժը լուծելու համար :

«Տիւֆրան անուն անձ մը, որ ամբաստանուած էր երկու խափշիկ սպաննած ըլլալու յանցանքով, որոնք զինքը թունաւորել փորձած էին, Փետրուարի սկիզբը պիտի դատուէր : Նաւը 28 ին մեկնած ըլլալով վճիռը յայտնի չէ :»

Պ. ԲԻՇՕՆԻ ՎԵՐԱԳՐՈՒՄ . — Պ. Սթէֆան Բիշօնի մօտակայ վերադարձով Ֆրանսայի Չինական դեսպանութիւնը թափուր կը մնայ առ այժմ : Հակառակ այս մասին տարածուած լուրերուն կը կարծուի թէ, Պ. Բիշօնի տեղը պիտի գրաւէ Պ. Պօ, որ այժմ Պ. Տէլքասէի դիւանապետն է :

Պ. Բիշօն Թունուզի ֆրանսական ընդհանուր կառավարիչ պիտի կարգուի :

ՏՕՔԹ ՔՕՐՆՖԷԼՏ ՎԿԱՅԱԼ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

Նախկին Ներքին Բժիշկ Վիէննայի գըլխաւոր հիւանդանոցներուն : Մասնագէտ միզանցքային հիւանդութեանց, Գաղղիական ախտի, կոկորդի, քիթի և բերնի հիւանդութեանց :

Ամէն օր հիւանդ կ'ընդունի կէս օրէ առաջ ժամը 10 քն 12, իսկ կէս օրէ վերջը ժամը 3 քն 5, իր տունը Շէրիֆ փաշա փողոց, ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՆ :

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՆ

(Շարև. Ասխորդ քիւիկ եւ վերջ) Հիմնարկութեան վարչութիւնը իր տեղեկագրին մէջ շնորհար իր խորին շնորհակալութիւնը յայտնել, ի դիմաց ժողովրդային Մատենադարանի, բոլոր այն քրտաբարութեանց և անհամբերուն, որոնք բարեհաճած են իրենց հրատարակութիւններու և գրքերու նուէրներովն քաջալերել ժողովրդային հաստատութիւնը : Մատենադարանը՝ ամբողջ տարւոյ մէջ միշտ բաց մնացած է առաւմտեան ժամը 6 քն մինչև զիշերուան 9-12 — եղանակներուն համաձայն :

Օրական միջին հաշուով քսան մարդիկ յաճախած են. 231 ընթերցողներ գրադարանէն օգտուած են, տարւոյն ընթացքին մէջ՝ 2879 գրքեր կարդալով . այս հաշուէն դուրս է ձեռքէ ձեռք կարգացուածներն, որոնք ոչ նուազ կարևոր թիւ մը կը կազմեն եղեր : Գրքերուն մէջ ամենէն շատ կարգացուածներն եղած են վիպական և մանկականներն . իսկ դասական, թատերական և բանասիրական ու բանաստեղծական գրքերը սակաւթիւ ընթերցողներ ունեցած են, ինչպէս վիճակացոյցը կը բացատրէ :

Ընթերցողներու մէջ աշակերտները — թուով 81 հոգի — միւս դասակարգին համեմատութեամբ 1203 գիրք կարգացած են, գրքից կէսը կարգացուած գրքերու համագումարին . արհեստաւորները՝ 440 . գործաւորները՝ 395 : Վիճակացոյցը կը ցուցնէ թէ Յունուար ամսուն մէջ 81 ընթերցողներ՝ 385 գիրք կարգացիր են, որմէ վերջը մինչև Սեպտեմբեր ախոր աստիճանաբար նուազած են . իսկ անկէ վերջը զգալի յաւելում մը եղած է մինչև տարւոյն վերջ : Աւելորդ է ըսել թէ ժողովրդական Մատենադարան-Ընթերցարանի շէնքը մտածուած է այնպիսի յարմարաւոր

տեղ մը փոխադրել որ հասարակութիւնը աւելի մեծ բազմութեամբ սկսած է յաճախել հոն :

Լսարանական ընթացքը 10 բանախօսութիւններ ունեցած է հետեւեալ նիւթերու վրայ :

1. Հայ գաղութի մը պէտքերը .
2. Գիւղատնտեսութիւն .
3. Ազգի մը յառաջդիմութեան հիմնական պայմանները .
4. Սասունի վերջին կոտորածը .
5. Շուշանի յիշատակին .
6. Ուսումնասիրութիւն մը մեր ներկայ վիճակին վրայ .
7. Բազմաբայական պարտք և իրաւունք .
8. Հայ ազգը ֆրանսայի հանրային կարծիքին առջև .
9. Ընտանիքի դերը ազգի մը յառաջդիմութեան մէջ .
10. Հայ կիներ և իր կոչումը .

Հիմնարկութեան վարչութիւնը այս առթիւ ալ հրատարակուելիք շնորհակալիքը կը յայտնէ Պատ. հասարակութեան, որ աւտենախօսութեան երեկոյնները խուսն բազմութեամբ լեցուցած է Լսարանի սրահները :

Չ'մոռնանք յիշատակելու որ պատախօսութիւնք ալ տեղի ունեցած են ֆրանսասերէն լեզուի, թուարանութեան, հաշուակալութեան և գծագրութեան վրայ, և 25 աշակերտներ հետեւած են այդ դասերուն :

Ահա իրական հաստատութիւն մը, որ իրական օգուտներ արտադրած և օգտակար ծառայութիւններ մատուցած է ժողովուրդին, ինչպէս իր տեղեկագիրը կը հաստատէ : Ժողովուրդը ինչ կը կորսնցնէ, երբ իր ամական քանի մը զրառ զճարճումով կրնայ ազդութեան մը ուժը ցուցաբերող հաստատութիւն մը կանգուն պահել : Ահա ինչ որ մեր ժողովուրդի եսամոլութեան զոհուած կրնայ լինիլ ստէպ և ինչ որ չենք ընել կրթութեան ու դաստիարակութեան մրցանակը շահելու համար :

Ուժ տանք զուտ ժողովրդական հաստատութիւններու . նիւթապէս և բարձրագույն մեր երջանիկ լինելու պայմաններէն մէկն է այս . բաւ է ինչ որ գերի ապրեցանք :

ՀՆԵՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ
ԿԻՐԱԿԻ 3 ՄԱՐՏ 1901

6880	4291	339	1191	8036	6872
2300	8516	4143	2072	5003	6111
1651	9152	4958	5718	9052	2584
602	5594	1105	6937	5851	7136
	4421	9485	7187		

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՎԱՐՃԱՐԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ
ԿԻՐԱԿԻ 3 ՄԱՐՏ 1901

3318	24	1500	407	172	586
902	1339	1800	2353	2762	3181
3366	3710	3748	3970	4177	4458
4902	5145	5890	5233	5401	5503
6086	6293	6375	6382	6418	6536

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ


Ս Ի Ն Կ Ե Ր
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պատարի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթլ Օթէլի ճիշդ դիմաց, Գաթէ Տը Լա Պուստի կից .

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍՆԱՃԻՂՆԵՐ ՈՒՆԻ
Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐ ՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է .
400 է առէյի վիսայիսաններով և մեքայիներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արտեսանակցիսին մէջ ստացած է .
ՀԱԳՐԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂՈՅԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹՍԳՍՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆՂՑԵ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԱՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԵՐ Ի յասկանելին :

Չրի դամեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԵՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ .
Վճարմանց Դիւրութիւն
Փոխանակութիւն ինքնաքանայից եւ նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ՄԱՆԿԱԲԱՐՉ
ՏԻԿԻՆ ՍՈՆԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ
Շարա-Ապսիլ-Ազիլ

Վերջերս իւր բնակութիւնը Սոնքունի ԲՏԷՆ փոխադրած է Շարա Ապսիլ Ազիլ, Ալի փաշա Շէքիֆի պարտիզին դիմաց, Ահմէտ պէյ Ապսիլ Բազզիի 20 թիւ սեփականութեան մէջ .

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ և յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիբէրնակ ազգայնոց և նոյն իսկ օտարաց, աշխարհ կը համարուի զայն յանձնարարէ իւր խնամոցը պէտք ունեցողներուն .

Վկայեալ աղքատներուն համար ձրի դարմանում :

ՄԻՒՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅԻՒՄ

Քանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Վ՛՛՛՛ ի նիքէլ, կոթէն լարուղ սիրուն ժամացոյցներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է : Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ 120 Վ՛՛՛ է սկսեալ մինչև 2500 Վ՛՛՛ : Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և արծաթե ժամացոյցներ . պատի և քօնալի բոլոր մազան Բանտիլներ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեացի Ֆոնոլիաֆիներու :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՍՈՒՏՈՒՆ
«ԱՐՇԱԼՈՅՍ»
ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԿԱԿԱՆ ԱԶԻԳԻ ՍԿԻՔԸ
Օսկանիցի դեղատանին դիմացի շրոյ ցին միջ .

- Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին .
- Այցեխարտեր, Երաշխաւորակներ, Գիրքեր, Հրատարակներ, Մանուկներ, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւններու կը վաճառուին հետեւեալ գրքերն .
- 1. ԲՆԱՇԵՐԱՐԿԻ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոյ մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ .
- 2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիս մուտքը, ինչպէս կը լսենք, արգելուած է եղեր .
- 3. ՀԱՒԱՔԱՄՈՑ հայոց ժողովրդական երգերու, Փարիլ տպագրեան, Տնօրինութեամբ Տ. Լևոն Եղիազարեանցի .
- 4. ՉՈՒԱՐՃԱԼԻ Անիքթոններ և ժողովրդական վէպիկներ կամ Մարդկային կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ :

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ
ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՏՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՈՒՄ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատակ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիարդ աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործակատար յ'Աղքատագրիս :